Հովհաննես Շիրազ

Վերելք

Աչքերիս մեջ գարնան օրը,
Ճամփես՝ բախտիս սարերն ի վեր՝
Ելնում եմ ես քարերն ի վեր,
Ելնում եմ ես սարերն ի վեր՝
Քարե՛ր, սարե՛ր, դարե՛րն ի վեր:

Բախտս աստղերն են վեր պահել,
Ջահել եմ ես ու ձիս ջահել,
Չեմ նկատում քարեր ճամփիս,
Չեմ նկատում սարեր ճամփիս,
Քարե՛ր, սարե՛ր, դարե՛ր ճամփիս:

Շանթն է բեկվում ճակտիս վրա,
Մահ չգիտեմ՝ կա թե չկա,
Ելնում եմ ես ահերն ի վեր,
Ելնում եմ ես մահերն ի վեր,
Ահե՛ր, մահե՛ր, գահե՛րն ի վեր:

Աչքերիս մեջ գարնան օրեր,
Ճամփես դեպի աստղերն անմեռ,
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ,
Քարե՛ր, սարե՛ր, դարե՛ր կան դեռ: